



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԻ ՏԱՐԻ ԶՄԻՌՆԻԱՅ ԾԱԲԱԹ 22 ՓԵՏՐՎԱՐ 1875

ԹԻԻ 1008

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Յանյեղումն հեռագիրն՝ Հելլատայի վարդապետի հետևողական նկատմամբ ծանր լուր մի բերաւ, որով վերայ թէև Աթէնքի լրագիրք ամանք կը ծածկուին, սակայն առաջը կըսէ թէ խօսք մի տղորաբար առանց հիման չտարածուիր, բայց զիստ կրնայ լինել:

Գերմանական, կըսէ յիշեալ հեռագիրը, պիտի առաջարկէ իրեն թագաւոր Հելլատայի վարդապետին Նատոյի, ի դիպուածի որ յեղափոխութիւն մի անհրաժեշտ պիտի լինի ի Հելլատայ: Թէև դժբաղդաբար հրատարակեցաւ Աթէնքի թղթային լրագրաց մէջ որ՝ եթէ Հելլատայի գործող թղթային այսպէս շարունակէ, կարելի է թէ յեղափոխութիւն մի ծագի: սակայն, կըսէ յուր խօսքն թերթի մի, քանի մը գրգռեալ լրագրաց կամ թղթակցաց նոյնն անխոհեմ զրուցուածքն, մինչև նոր թագաւորի մը առաջարկութիւնն և այն ալ Գերմանիայէն, վիճ մեծ կայ:

Հոնոնի Աւետարանական Ուխտին պատգամաւորաց ի Կ. Պօլիս գալն և օգոս. Սուլթանէն ունեկողութիւն չկրնալ ստանալն՝ անգղիական լրագրաց ոմանց քննադատութեան նիւթ եղած է: Բայց այս քննադատութիւնն առաւելապէս ի նպատակ բարձրագոյն Դրան է քան թէ ի նըպատակ Աւետարանական Ուխտին: Մանաւանդ լոնտոնի թաղի օրագիրն ոչ միայն արժանաւոր կը գտնէ օգոս. Սուլթանին ընթացքն այս պատգաւային մէջ, այսինքն պատգամաւորաց ունեկողութիւն մատուցանել չուզելն, այլև կերպիւ իւր կը մեղադրէ Աւետարանական Ուխտին համարձակութիւնն, որ իւր մասնաւոր անուամբ կողմէ բանակցութիւն ընել օտար կառավարութեանց հետ՝ նոյա սխալներն ուղղելու նպատակաւ: Անգղիական ուրիշ լրագիր մը յառաջ կը բերէ, և անշուշտ կարի իրաւամբ, թէ այս

պարագային մէջ խիստ վախճուի է կայութիւնն վեհա. Սուլթանին, որ օսմանեան տէրութեան ինքնակալ և միանգամայն մահմէտական կրօնին գլուխն լինելով, նոյն կրօնին դէմ եղած քարոզութեանց և հաւատախախտութեան ջանքերուն անտարբեր չէր կրնար մնալ:

Հաւատախախտութեան այս ճգունքը, կրնայ յաւելցնել մէկը թէ՛ աւերի վտանգաւոր են քրիստոնեայ ժողովրդոց համար. բայց և այնպէս մինչև ցայսօր մեծ արդիւնք չգոյացան ի նոյն ճգնաց: Գաղով մահմէտականաց՝ անհարկն կերելի որ քրիստոնեական կրօնն ընդունին համազմամբ, ինչպէս որ Աւետարանական Ուխտն արդէն փորձիւ իմացած պիտի լինի Հնդկաստանի մէջ. ուր վերջի որիս թագուհին երեսուն միլիոնէն աւելի մահմէտական ժողովուրդ հպատակ ունի, և այս պատճառաւ Անգլիացիք կը սեն թէ Մեծին—Յիսուսի կառավարութիւնն աշխարհիս ամենէն մեծ մահմէտական տէրութիւնն է:

Գաղղիան ի մօտ աւուրս դանձային (financier) յաղթանակ մի տարաւ, զոր յառուկ նշանակութեան արժանի կը համարուի: Գաղղիական օրագիրք կը հրատարակեն թէ փարիզ մայրաքաղաքին փոխառութիւնն, որ 220 միլիոն ֆրանք որոշուած էր՝ ստորագրութեան հանուելով, 42 անգամէն աւելի գումարի ստորագրողք գտնուեցան, այսինքն 9336 միլիոն 800,000 ֆրանք գոյացաւ քիչ օրուան մէջ: Այս գումարէն հարկաւ միայն 220 միլիոնն օրինաւոր համեմատութեամբ վար դնելով, մնացեալն թող պիտի տրուի: Փարիզի քաղաքապետութեան կուսակից ըրագիրք այս արտաքոյ կարգի նպատակաւ պարագայէն օգուտ քաղելով, կը մեղադրեն վերայի ազգային ժողովն՝ որ անտեղի երկիւղիւ և կասկածանք չուզեց վերագառնալ ի փարիզ, որում բոլոր Գաղղիան ամենայն վստահութեամբ կը հաւատայ իւր դրամագլուխները:

պատճառաւ Ներսէս վարդապետն Եփրեմարքեպիսկոպոսի անուն դրել էր կախող փուշ, իւր մտաց մէջ հաստատել էր Եփրեմին մէկ գեղեցիկ պատրուակաւ հեռացնել Եփրեմին, և դնել Յովսէփայ դէմ՝ որպէս դիմամարտ Խոյսեան: Վասնորոյ այնքան ջանադիր եղև, մինչև յաջողեց հաւատացնել Ղուկաս կաթողիկոսին և Եփրեմին միաբանից՝ թէ Յովսէփն է պատճառ, որ ցարդ կայրուհին Ռուսաց՝ կաթողիկոսի կնիքակն թողել է անպատասխան:

Միաբանութիւնն համախումբ ոտք ելլան, և պահանջեցին որ անշուշտ Առաջնորդութիւնն Ռուսաստանի՝ Յովսէփայ ձեռքէն առնուի, և յանձնվի Եփրեմին: և եթէ Յովսէփ անսաստ գտնվի և առ այն նուազ՝ հոգեւոր զինուոր հարուածուի, մինչև ի զգաստութիւն դայ: և այսպէս Եփրեմ արքեպիսկոպոսին ուղղորկեց Ներսէս վարդապետն ի Ռուսաստան, որ Յովսէփին կապանք բերէ յԵփրեմին, և ինքն հաստատուի յԱռաջնորդութեան Ռուսաստանաց Հայոց:

Եփրեմ արքեպիսկոպոսն եկաւ յԱստրախան ի սկզբն 1896 ամի: Ինքն խոհական և խաղաղասէր անձն գտնվի թէպէտ գահավէժ չգրորեցաւ կռիւներու խորխորան, և ինչպէս նորան Ներսէս վարդապետն էր պատուիրել չընկաւ իսկոյն Ռուսաց մեծամեծաց դռներն, որ կաշառներով նոյա սիրան դարձուցանէ առ ինքն, սակայն երբ տեսաւ Յովսէփայ երկուսուն՝ չկարողացաւ զսպել զանձն, որ չյայտնէ թէ ինչ խորհրդով է եկել: Հայազգի երեւելի վաճառականք, որ Յովսէփայ գործերէն էին տեսել և

Հելլատայի և օսմանեան հզօր տէրութեան կառավարութեանց մէջ բարեկամական անկեղծ յարաբերութիւնքն երթալով կը զարդանան և կը հաստատուին ի փոխադարձ օգուտ այս երկու գրացի պետութեանց: Մեր այս զրուցածներուն ազացոյց կը համարուին վսեմա. Յովսէփայ պէյին համառօտ ատենախօսութիւնն և Հելլենացոց թագաւորին պատասխանը, զորոք ի յունարէնէ թարգմանելով՝ մեր ընթերցողաց աչաց ներքն կը գնեն:

Վեհափառ Տէր. բարեբաղդութիւն և պարծանք համարելով ինձ՝ որ կրկին հրաւիրեցայ յօգոստափառ վեհապետէն իմիջ ի պաշտօն ներկայացնելոյ զնա առաջի Մեծափառութեան ձերում, պատիւ համարիմ անձինս մատուցանել ձեզ նախորդ դեսպան Խստա պէյին յետ կոչման հրամանագիրն և զկայսերական նամակն, որով օսմանեան լիակատար դեսպան կարգեալ եմ ձեր վեհափառութեան քով: Յիշեալ նամակաց մէջ բացատրուածէն աւելի ճշդիւ չեմ կրնար յայտնել ձեզ զբարեկամական զգացմունս և զմեծ համարումն զորս օգոստափառ Տէրն իմ կրտսէ վսեմ ձեր վեհափառութեան: Բարեգութ և անբախտութիւնն, որով պատուեցիք զիս իմ առջի երկարատե դեսպանութեան ժամանակ, անտարակոյս պատճառ եղև իմ կրկին ընտրութեանս: Կայսերական վեհափառութեան ինձ ցոյց տուած հաւատարմութեան լաւագոյն կերպիւ պիտի չկրնամ համապատասխանել, բայց միայն նուիրելով իմ ամեն ջանքն ի զարգացնել ևս քան զնա զբարեկամական յարաբերութիւնն՝ որք բարեբաղդաբար հաստատեալ կը գտնուին այս երկու տէրութեանց մէջ: Իմ դեսպանական պաշտօնս այս նպատակն ունի, զոր պիտի չկրնամ յաջողութեամբ ի գործ դնել բայց միայն ձեր վեհափառութեան առաւտագութիւն շնորհիւ, զոր ամենախոնարհաբար կը համարձակիմ հայցել ի ձեռն:

ճանաչել թէ ինչ է ազգասիրութիւնն, և որչափ հաղուագիւտ և անգիւտ իսկ է Հայոց ազգի մէջ ազգասէրն, ազգի օգուտն և Եփրեմին շահն և պատիւն իւրեանց նպատակ դնելով եկան ժողովեցան Եփրեմարքեպիսկոպոսի խոցն որ էր ի բնակարանի ժամակոյ Գրիգորի ի սրահի աւագ եկեղեցւոյ, ուր էր և Առաջնորդարանն, և համագեցին՝ որ Եփրեմ զգուշանայ, և ազգամիջեան կռիւ չգրգռէ:

Եփրեմ բարի դատարարութիւն էր ստացել բազմամեայ բնակութեամբ ի մէջ հարուստ ազգասէր և փորձ վաճառականաց Հայոց Հնդկաստանի, վասնորոյ՝ երբ տեսաւ Աստրախանայ հայազգի վաճառականաց տրամադրութիւնն՝ որ ի նոյն խմբոյ էր զանգեալ, բարեւոք վարկաւ որպէս խուլ և համր յետս դառնալ, այլ Յովսէփայ ճանկերէն ազատին էր այնուհետեւ անհնարին: և այս իսկ պատճառաւ՝ Եփրեմ թէպէտ չկորցրեց իւր արքեպիսկոպոս անունն, բայց ոչինչ նուազ քան զՄովսէս վարդապետն մնաց ի ժամակոյական խցին ամս բազում, ուտելով իւր հայն, և սասանեալ և զարհուրեալ երթեկեկելով յեկեղեցին, և լուռ կալով և ազօթելով ի դասն աշակերտի, ուր լլբենի եկեղեցանք՝ բազում անգամ յերկրպագանելն նորա՝ ոտնհար են եղել ի վեղարն նորա:

Այսպէս Եփրեմ մեծաւ զօրութեամբ զինեալ Հայրապետական կոնդակօք ել յԵփրեմին, և եկեալ յԱստրախան վատթար քան զՄովսէս վարդապետն անկաւ ի դարան, և որ ունէր կապանք տանիլ զՅովսէփ յԵփրեմին, ինքն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԾԱՂԱԿԵՐԱԿ

Իրաւատար կենսագրութեան սրբազան Հայրապետի Ներսիսի Ե. վեհափառ, եւ ազգասէր կարողիկոսի ամենայն Հայոց:

(Շարունակութիւն: Տես քիւ 1006)

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Ի վեր անդը ասացի թէ Ներսէս վարդապետն Յովսէփ արքեպիսկոպոսին սանձահարեցայ աղաքաւ մէկ այլ նորահնար ճանապարհ նիւթեց: ասա այս էր այն նոր ճանապարհն: Երբ Պարսից արշաւանաց փոթորիկն անցաւ, և Եփրեմի անունն Ռուսաստանի հայաբնակ քաղաքաց մէջ հռչակի հարաւ, Ներսէս ժամ դիպուկ համարեցաւ իւր խորհուրդն կատարել: և սկսաւ Ղուկաս հիւանդ կաթողիկոսին միւսանդամ գրգռել ընդդէմ Յովսէփայ: և որովհետեւ Եփրեմ իւր մեծագանձ ճոխութեանց պատճառաւ Եփրեմին մէջ աւելի պատիւ, յարգ, մեծարանք և հեղինակութիւն էր ստացել քան զուրիշ Ղուկաս կաթողիկոս, և քան զինքն անարժան Ներսէս վարդապետն: Ներսէս կատարելով թէ չլինի որ յաւերժ փառասիրութեան կայծ ընկնի Եփրեմի սիրան, և միաբանք ընտրեն զնա կաթողիկոս և դնեն Հայրապետական աթոռն, որովհետեւ քաջ զիտէր՝ որ յաւուրս Եփրեմին նա չէր կարող յայնմ հետեւ սենեակայն զօրութիւնն: և այն իսկ

Ահա Հելլենացոց թագաւորին պատասխանն :
Մեծարգոյ դեպքան : Հաճութեամբ սրտի կը
տեսնեմ զկրկին ընտրութիւն ձեր 'ի վեհափառ
Սուրբանէն 'ի բրեւ դեպքան իմ քովս : Գալ ճա-
նաչելով զմեծ գինն բարեկամական զգացմանց
և համարմանն , զորս կը յայտնէք ինձ յանուն
օգոստոս վեհապետին ձերոյ , կողաչեմ զձեզ
ապահովցնել զնորին կայսերական վեհափառու-
թիւնն , թէ կատարելապէս կը մասնակցիմ նոյն
զգացմանց , և ուրիշ որեւէ բանի աւելի և 'ի բո-
լոր սրտէ չեմ փափաքիր , բայց միայն տեսա-
նել ևս առաւել աճումն և զարգացումն բարե-
կամական բարեմիտ յարաբերութեանց , որք
բարեբաղդաբար հաստատեալ են այս երկու
գրացի տեղութեանց մէջ : Հաւատի լերուք ,
մեծարգոյ դեպքան , թէ բոլորովին յօժարամիտ
պիտի գտնէք զկառավարութիւն իմ գործակից
լինելու ձեզ վասն ամրապնդելոյ այս յարաբե-
րութիւնքը , և պիտի յաջողիք իմ արժունեաց
քով միեւնոյն բարեկամական ընդունելութիւնն
գտնելու , ինչպէս որ յառաջագոյն եղեւ ձեզ :

Ի տեղեկութիւն Պարսկաստանի եւ Հնդկաստանի
մեր ընթերցողաց , արժան համարեցինք՝ ՄԱՍԻՍԻՆ
Փետրուարի 4 րիւնք քաղելով , Արշալուսոյ միջոցաւ
հրատարակել գիտեսեալ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԱՐՄԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Ամեն տարի Մուհարրէմ ամսոյն 10րդ օրը
Պարսից կատարած զանազան արարողութիւնք՝
Պօլսոյ բնակչաց գրեթէ ամենուն ծանօթ են .
բայց շատ քիչերը տեսած են աչօք կամ գաղա-
փար մ'ունեցած այն եղերական և սգաւոր
հանդէսներուն վրայ , որք այս առթիւ ամեն
տարի կը կատարուին ի Կ. Պօլիս՝ վալիաէ խանի
մէջ . ուստի այս անգամ անցեալ երեքշաբթի
երեկոյ յիշեալ խանին մէջ կատարուած արա-
րողութեանց պատմութիւնն արժան կը համա-
րինք հրատարակել իրրեւ խիստ հետաքրքրական
և միանգամայն տարօրինակ և զարմանալի ա-
րարուածոց նկարագիր մը :

Յայտնի է մեր ընթերցողաց որ Շիրինն այս
տօնս կը կատարեն ամեն տարի ի յիշատակ մահ-
ուան Հիւսէյնի , որ հրամանաւ Շիրաի որդւոյ
Մուսալիէի՝ Մուհարրէմի 10րդ օրն սպանուեցաւ
Քերպէլայի դաշտին մէջ՝ Ալիի յաջորդութեան
առթիւ Արաբացոց մէջ պատահած կրօնական
կռուոց ատեն :

Այս օրէն հետէ Շիրինը բնաւ չեն մոռցած
այն չարագէտ աւուր յիշատակն , և ամեն տա-
րի , ինչպէս ըսինք , Մուհարրէմի մէկէն սկսեալ

մնաց ի գերութեան աղօթարար : Ընդ եւանէն
Եփրեմի յիշմիածնէ՝ դէպ ի Ռուսաստան , ի միա-
սին նորահետ ելաւ և Ներսէս վարդապետն
յիշմիածնէն դէպ ի Կ. Պօլիս , ուր արդէն ի 1796
նուիրակ էր գնացել , և զինի իւր նուիրակու-
թեան գործն աւարտելով Զմիւռնիոյ առաջնորդ-
էր նշանակուել Դանիէլ ահեղաձայն , բայց և
ընդ նմին հեղաձողի արքեպիսկոպոսն Էջմիած-
նի : Մինչդեռ Ներսէս կայր գեղերեալ Պօլիսէն
Զմիւռնիա և անդրադարձ Զմիւռնիայէն ի Պօ-
լիս , լսեց Եփրեմ արքեպիսկոպոսի ի Ռուսաս-
տան առաքելութեան անյաջողութիւնն , և վե-
րադարձաւ յԷջմիածին , ու թուտաներորդ դա-
րու վերջնութիւն տարին , մինչ 1798 ամին Դա-
նիէլ՝ որ Զմիւռնիոյ առաջնորդութեան անցոր-
մաւ համարուելով հանուել էր յաթողոյն , Զա-
քարիւս Պատրիարքէն յետոյ Պօլսոյ Պատրիարք
ընտրուեցաւ ի 1799 յամենան մարտի : Ներսէս
վարդապետն հասանելով յԷջմիածին՝ երբոր
տեսաւ թէ Ղուկաս կաթողիկոսի վարձանն մօ-
տեցել էր , սկսաւ մտածել իւր ապագայն , և
պարզ տեսանելով որ Ղուկաս կաթողիկոսն
յետ ո՞վ որ լինի Հայոց Հայրապետ , ոչ թէ մի-
այն չի տար նորան այն բացարձակ իշխանութիւն
ինչ որ տուել է նորան Ղուկաս կաթողիկոսն
այլ և երկնչելով նորա խորագրութեանն՝ ոչ ոք
համարձակել ձեռն դնել նորա գլխոյ վերայ , և
տալ նորան կաթողիկոսութիւն , կամեցաւ Հայ-
րապետութիւնն տեսնել այնպիսի անձին վերայ ,
որ երախտապարտ լինելով նորան՝ ոչ միայն իւր
հայրապետական անդրանիկ դործն անէ նորան

սեպ և թաղութեան մէջ կընկնին մինչև 10րդ
օրը , որ մեծ հանդիսն համար որոշուած օրն է :
Դանք վալիաէ խանը :

Ժամն երեկոյեան գրեթէ երկուքին միջոցնե-
րը (ըստ եւրոպացոց 7 1/2) խանին ընդարձակ
բալը խուռն բազմութիւն մը լցուած էր ամեն
ազգէ և ամեն ժողովրդէ : Բակին չորս կողմն
յատուկ վերնայարկեր կանգնուած էին , գոր-
գերով , հայելեօք , մամեղիւօք և այլ և այլ զար-
դուք ու կարասեօք զարդարեալ ըստ արեւել-
եան տարազու :

Նաւերէ և պարանայ կանոնաւոր գծերէ
հազարաւոր կանթեղք կախուած էին . նոյնպէս
կրպմէ կանոնաւոր հեռաւորութեամբ գրուած
շահեր կը լուսաւորէին տըրազին հանդէսն՝ որ
գեռ այն ինչ սկսելու վրայ էր :

Երկու գլխաւոր վերնայարկաց մէջ կը գտ-
նուէին Ռուսիոյ դեսպանն ու արկին իկնաթիւֆ ,
Գերմանիոյ դեսպանն իւր կնոջն ու դստեր հետ ,
Գաղղիոյ դեսպանական գործակատար Պ. Մոն-
կասքան և իւր կինը , ինչպէս նաեւ բազմաթիւ
դեսպանական պաշտօնեայք , ծովային պաշտօ-
նատարք , և այլն :

Երկրորդ վերնայարկին մէջ կը գտնուէին Ռու-
սիականութեան և Առեւտրական գործոց վեմա-
նախարարներն և այլ բազմաթիւ բարձրաստի-
ճան պաշտօնատարք և ակաւաւոր անձինք :

Արարողութիւնը խիստ զարմանալի և հետա-
քրքրաշարժ թափորով մ'սկսաւ : Թափորին ա-
ռալէն նախ կուգար սեւագետ աղայ մը՝ հա-
մակ սեւով համեմատել ձիւց մը վրայ հեծած , որ
տիտը ձայնիւ մը կըրգէր և զուլիւր մոխիր կը
յանէր : Իւր ուղիւ աւարտելուն հարկեր չափ
ապաշխարողք երեան ելան . որք երկու գծի
վրայ յիշեալ ձուաւոր պատանաւոյն կը հետեւէին
կարգաւ , մէկ ձեռքով մէկ մէկ շահ բռնած և
միւս ձեռքով ալ մերկ կուրծքերին ու ժպնա-
պէս հարուածելով , և զայն Մուստաֆա , եւ
Հաւան , եւ Հիւսէյնիս գոչելով կը հեծէին ու
կաղաղակէին : Քիչ մը ժամանակ վերնայարկաց
առջեւ կանգ կառնուին . ապա թափորը կը շա-
րունակէին բակին մէջ տեղ կառուցեալ պատշ-
գամի մը շուրջը գառնալով :

Զուաւոր պատանին Հիւսէյնի ազգականնե-
րէն այն աղայն կը ներկայացնէր , զոր Եփրեմի
զինուորները գերի բռնել էին ժամանակաւ :
Այս խումբն անցնելէն վերջը կարգ կարգ ուրիշ
խումբեր ալ անցան : Մէկ մ'ալ սոսկալի կակա-
նաց աղաղակներ , ողբոց ձիւեր և խլացուցիչ

եպիսկոպոսութիւն շնորհէր , այլև ցորչափ կեն-
դանի է՝ նորան Էջմիածնէն չհանէ , և առանց
նորա հաճութեան մէկ քայլ չանէ ոչ յառաջ և
ոչ յետ : Ներսէս վարդապետի ծայրագոյն ար-
ժանաւորութիւնն այս էր , որ այսքան անցից
սկզբնապատճառ էր , և ոչ ոք չէր կարող տեսլ
թէ այս ինչ գործոց շարժառիթն Ներսէս վար-
դապետն էր . չէր գտնուել հետք ինչնորա հնարից
որ մարթնայր ոք տեսլ թէ այս նորա գործն
է . ոչ բանիւ և ոչ գրով կարէր ոք երբէք հա-
տատել . և այս պատճառաւ երբ մէկ անցք տե-
ղի կուենայր , կասէին Հոգւոյն Սրբոյ անօրէ-
նութեամբ է , և ամենքեան կիմանային՝ որ
Ներսէսի մատին աղգեցութիւնն է . վասնորոյ
ստեղծ կ'ըսէր Էջմիածնի միաբանից բերնէն
այս երգն , « Գեղակալի ճարտարապետ՝ անցեր
ընդ ծով կենցաղս անհետ » : Այսպէս Ներսէս
վարդապետն ձեռնամուխ եղել իւր խորհուրդն
մտքմտացանելով դիտաւորութեամբ մէկ այն-
պիսի գործոյ , որ Հայոց եկեղեցւոյ հիմն դրը-
դեցուց : Գրեց Պօլիս իւր մտերիմ համախոհ
կիւմիւլիսանցի Մանուէլ վարդապետին մի նա-
մակ , որոյ մէջ իմաց անելով Ղուկաս կաթողի-
կոսի կենաց վերահաս վտանգն , խորհուրդ ար-
ւեց , որ նա ջանայ որքան հնար ունի՝ Պօլսեց-
ւոյ բնարել տալ Դանիէլ Պատրիարքին՝ Ղուկաս
կաթողիկոսի յաջորդ , նորա սիրան գրգռելով
այնու , որ Դանիէլ զինի իւրոյ օժութեան՝ յա-
ռաջնութիւն իսկ կիւրակէի կը շնորհէ՝ նոյն երկու-
ցուն ևս եպիսկոպոսութիւն , զոր Ղուկաս յա-
մենայն կենաւ իւր զլացաւ : Իսկ ինքն Ներսէս

ճնձղայից ժողոր մը լսելի եղաւ . Անթիւրայ թա-
փորն էր որ կուգար : Ինտինն մեծամեծ շահ-
ղոր կըրերէին կանաչ վերաքիւռ հագած մա-
դիկ , հանդիսատեսաց աչացն առաջ բացու-
այս տեսարանիս վրայ նոր լոյս մ'ալ տիւեցին :

Սպիտակ երկվար մը , որոյ վրայ արեւելեան
մեծկակ համետ մը գրուած էր , և որոյ կայ
մուածքն համակ արեւնաթաթաւ էին , ամեն
առաջ կը քայլէր՝ ձեռքերնին կանաչ գորշաթա-
կորդ տանն հոգիէ շրջապատեալ : Այս ալ Հիւ-
սէյնի ձին էր , որ իւր տէրը կորուսէր էր .
նոր ետեւէն կուգային երկու ուրիշ ձիւր
նմանապէս արեւնաթաթաւ . սուք ևս պատե-
րաղմին մէջ սպանեալ Հիւսէյնի գերդաստան
երկու անձանց ձիւրն էին : Այս ձիւրէն վեր-
կուգային անթիւրայ ըստաճներն՝ այսինքն գե-
տի տեղ պատանքներ հագած , գլուխն և
կուրծքերնին բաց հարկեր չափ մարդիկ ,
ձեռքովն իրարու գօտիէ բռնած էին . յա-
ալ ձեռքովն մէկ մէկ ահագին Խալապուկ
զացնէին , և անով իրենց գլուխն ու կուրծ-
քեւերը կը լիւրաւորէին : Արեւն ամեն կողմ
կը յայտէր և սոսկալի երեւոյթ մը կուտար
մարդկանց : Բայց որպէսզի իրենց սաստիկ դը-
գուեալ միջոցին զիւրար չ'սպաննեն , այս ուրու-
կանաց իւրաքանչիւրին ետեւ մէկ մէկ հոգի կը
թայցին , որք ձեռքերնուն գաւազանաւ կը
գերուին որ Խալապուկները մահացու վէրք
կականաց և ուղոյ յուսահատական ձիւրու
մէջ տեղ շահերուն եղերական և տարօրինակ
նշուլիւ , ըստաւորեալ այս տեսարանն այնքան
ազդու տպաւորութիւն մ'ունեցաւ հանդիսա-
կանաց վրայ , որ կըսեն թէ եւրոպացի ծերուն
ծովային պաշտօնակալ մը՝ որ նոյնա մէջ լըզ ըս-
նուէր՝ մարեր ինկեր է : Անթիւրայ թափ-
փայլին նստած պատշգամին առջեւ կանգ առ-
նելով յայտնային թէ՛ եթէ իրենց ընկերներէն
երեքն որ թ եթ և յանցանայ համար բանտա-
կեալ էին , արձակելու խօսք չտայ , այն տեղ
ինքզինքնին կտոր կտոր պիտի ընէին : Ռուսի
արկականութեան պաշտօնեայն պարտաւորեցաւ
խոստանալու որ այն երեք պարսկին արձակէ :

Այս եղերական հանդէսն ու յուզարկաւորու-
թիւնն երկու ժամու չափ տեւեց . վասնորոյ Պօ-
սոյ զանազան խաներէն եկող անթիւրայ գոն-
դերն հետզհետէ կաւեճային : Ժամը գիշերուան
4 1/2ին (10 ըստ փրանկաց) ատեններն ամենայն
ինչ վերջացած էր :

Պեղողներ կան թէ այս տօնախմբութիւն
վարդապետն առ երեսս , որպէս թէ մոտենելով
Հայ ազգի օգուտն , կամ Էջմիածնի և ընդհա-
նուր Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ պայծա-
ռութիւնն , երբ Ղուկաս կաթողիկոսն ի 1800
ի 25 Յունիս ամսոյ վախճանեցաւ , Էջմիածնի
միաբանից առաջարկեց կաթողիկոսի ընտրու-
թիւնն փութացուցանել :

Այս ժամանակի Էջմիածնի միաբանից մէջ ան-
ուանի էին Դաւիթ արքեպիսկոպոս Էջմիածնե-
ցի , որդի Պարզալուսոյ ուրուք , զոր կոչէին և
Լուսեցի և Տիկիսեցի , Մինաս արքեպիսկոս ,
Բարսեղ արքեպիսկոպոս Կեսարացի , Ներսէս
արքեպիսկոպոս Երբ մեծ կուցեցաւ , և այլ բա-
զումք , յորոց ամանք գտանէին ի Պօլիս , որպէս
և Գալուստ եպիսկոպոս և այլք : Ներսէս վար-
դապետն որ քաջ ճանաչէր զոգի Դաւիթ ի նա-
կեթեցւոյ , զի յարեալ է ի Յովսէփ , գնաց նախ
առ Դաւիթն , և որպէս թէ խոստովանալով
յայտնեաց նմա՝ թէ հանգուցեալ Ղուկաս կա-
թողիկոսն քանի ամառը յառաջ քան զայն ա-
րարեալ է կտակ և ի նմին նշանակեալ յաջորդ-
իւրոյ հայրապետական արժողոյ՝ զԴանիէլ վա-
նորոյ և խորհուրդ ետ նմա ընտրել զԴանիէլ և
խոստացաւ նմա զնա ինքն զԴաւիթ առաքել
հրաւիրակ Դանիէլի ի հայրապետութիւն , և
երգմամբ ուխտեց գրել առ Դանիէլ , որ նա
իւր պատրիարքութիւնն Պօլսոյ տայ նորան Դա-
ւիթն : Ներսէս վարդապետն այս՝ այն գիտաւ
թեամբ այսպէս անօրինեց , որ Յովսէփ կարծէ
Դաւիթն իւր հակառակորդ , և մանաւանդ Դա-
ւիթ հեռանայ Էջմիածնէն , որ յապոյցն չլինի

Շիններուն մէջ վաղիմի ստորութիւնն մը չէ, և թէ Պիւլիտենբուրգ հաստատուած Միւլիշի-տիւլա Սուլթանն եղբոր է որ Հիւնթիթի 355 թը-ւին (946) հաստատուել է զայն՝ Ամիրապետին յաղթէն և զայն դերի վարելէն յետոյ :

Ուրիշներ ալ կըսեն թէ Թէհրանի մէջ անծա-նօթ եղող այս արարողութիւնն հազիւ քառորդ դար մը կայ որ Սպահանի մէջ և Պարսկաստանի այլ մի քանի կողմերը մտած է ճարտարներն ե-կող մարդոց ձեռքը :

Պարսից վեհմե-դեստանը, Ներիման խան հայազգի դորապետն և Միրզա Ճալալ խան, մեծապէս խնամք տարած ըլլալով որպէսզի հան-դիւնի բոլանդակ տեղութեան միջոցին բարե-կարգութիւնը չխռովի, նաեւ օտարական հան-դիւտետաց ալ խիստ վայելուչ ընդունելութի-յոց տուած ըլլալով, ամենուն շնորհակալեացն արժանացած են :

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՑՈՒՆ ԶՄԻՈՒՆՈՅ

Ինչպէս մեր նախնիքաց թուով ծանուցեալ եմք, այս պատուական հաստատութեան մէջ ամսոյս 12ին ընդհանուր ժողով գումարութեան, նորա գործադիր խորհրդոյ անդամքն ընտրուե-լան գաղտնի քուէարկութեամբ. որոց անուան-քնն հետեւեալքն են, զորս կընշանակեմք ըստ կարգի առաւելութեան քուէից :

Մեծարգոյ տեսարք

Գալուստ Կոստանդեան,

Գրիգոր Մսերեան,

Ղուկաս Եսայեան,

Յովհաննէս Միրզա,

Պետրոս Տիլլէրեան :

Ճարակոյս չունիմք թէ այս ուսումնական ազ-նիւ երիտասարդաց բարենախանձ յարատե ջա-նիւքն, և գործակցութեամբ միւս բոլոր ան-դամոց, ինչպէս նաեւ քաղաքիս Հայոց ազգա-սիրական օժանդակութեամբն՝ յիշեալ Հայ Ըն-թերցատունն օրըստօրէ ևս առաւել զարգանա-լով մեծ օգուտ և պատիւ պիտի ընէ Զմիւռնոյ Հայ երիտասարդաց :

Կըսեմք թէ Կ. Պօլսոյ Միւլիշի-տիւլի արժանա-տէր Սահակ քահանայն՝ իւր աշխատանքով քննական կրօնագիտութեան մի օրինակ 'ի Ս.

նորան գլխահար : Յետոյ դնաց առ Բարսեղ և Մինաս եպիսկոպոստն և նոյնպէս խոստովանա-բար ասաց թէ Ղուկաս կաթողիկոսն իւր աթոռն կտակաւ թողել է ժառանգութիւն Յովսէփին : Այսպէս դեռ ևս Ղուկաս կաթողիկոսի դիակն էր ստուել, որ էջմիածնի միաբանք յերկուս բաժնիցան, ոմանք Դաւթի հետ միասին Դա-նիէլեան համախօսք եղան, և ոմանք Բարսեղ կիսարացւոյ ղհետ երթալով սկսան Յովսէփի համար լինել փողահար : Մինչդեռ միաբանու-թիւնն պատաղեալ կայր հանդիսիւ յուղարկու-ւորութեան Հայրապետի, ի թաղումն որոյ հրա-ւիրեցան և հինգ Մելիքք Ղարաբաղու, և այլ երեւելի Հայք ի կողմանց Թաւրիզու, Խոյի, Սալամաստայ, Խարսայ, Մշոյ, Արղրումայ և այլ մերձակայ հայաբնակ քաղաքաց, որք կային շուրջանակի զՄասեօք յոյս կոյս և յայն կոյս Ե-րասխայ և Սիւրբեան գետոց, Ներսէս վարդա-պետն ընտրեալ մին ի հաւատարիմ սուրհան-դակաց (չաթր) էջմիածնի, որք շնորհօք Ներսի-սի վարդապետի հատընտիր խմբեալ էին յԱշտա-րակ դեղէն, ի մտերմաց Ներսիսի և եղբորնորա Շահազիզեան կարապետ աղայի, առաքեաց յԱսորական, աշտանակեալ ի վերայ միւր յօ-գապորիկ երկխարաց, որով լի էր միշտ անու-հայրապետանոցն, և տուեալ ի ձեռն նորա նամակ շնորհաւորութեան ի դիմաց իւրոց և ա-մենայն համախօսից, յորում հրաւիրէր զնա յա-թոռ Հայրապետական, զոր իւր թէ կտակաւ թողեալ էր նմա հանգուցեալ Ղուկաս կաթողի-կոսն :

ԾԵՐՈՒՆԻ ԳԱՅՐԻՆԻ ՊԱՏԻԱՆԱՆ
(Երասխայի) :

Էջմիածին առ վեհա. Սրբազանդոյն կաթողիկոսն յուղարկած լինելով 'ի նուէր, Նորին Վեհափա-ռութիւնն՝ յատուկ օրհնարեւ կոնդակաւ փու-թացեր է իւր հայրապետական բարձր գոհու-նակութիւնն յայտնել յիշեալ պատուական քա-հանային, խնդրելով 'ի նմանէ որ 'ի նոյն կրօ-նագիտութեան հարեւր օրինակ 'ի Ս. էջմիածին առ ինքն յուղարկէ :

Յարգոյ խմբագիր Արշալոյս,

Իզմիր, 17 Փետրվար 1875

Քաջ կը յիշեմ, որ ժամանակաւ Տիֆլիսու մէջ հրատարակուած ԿՈՎԿԱՍ անուն հայերէն լրա-գրին մէկ թերթին մէջ լուսահողի Եփրեմ կա-թողիկոսին՝ առ Նիկողայոս Ռուսաց կայսր գը-րած մէկ աղբրագիրը կարգացած եմ, որով յիշեալ սրբազանը իւր հրաժարականը կուտայ (իւր ծերութիւնը պատճառ բերելով) և կ'ընդ-րէ միանգամայն որ Ներսէս սրբազանը իրեն յաղորդէ՝ նորա արժանաւորութիւնը գովելով : Արդ՝ հետագայիւ եմ իմանալով թէ արդեօք ինչո՞ւ համար Մսերայ մագիստրոսի կենսագրու-թեանը և Պերպլեբեան Աւետիսի յօրինած Հայոց պատմութեանը մէջէն զանց է եղեր այն նշա-նաւոր դէպքը՝ որ տեղի ունեցեր է, և իբրեւ պատմական ճշմարտութիւն պէտք էր և կարժէր որ յիշատակուէր : այլ միայն՝ Եփրեմ սրբազանը հրաժարեցաւ և նորա յաջորդեց Յովհաննէս կարբեցին ըսելով չոր ու յամաք անցեր են :

Ուստի, յարգոյ խմբագիր, այն երկուող հար-ցումն հրատարակելիք խնդրելով և Ներսէս սրբազանի կենսագրութիւնը հրատարակող ար-ժանայարգ Գ. Պատկանեան ծերունոյն ուշա-գրութիւնը հրաւիրելով, մնամ միշտ ձեր և սի-րելի աղբիւր

Աղօթարար :

Կարապետ քահանայ Տեղապետ :

Զմիւռնոյ եկեղեցական արձանագրութեանց համեմատ յընթաց անցեալ 1874 ամին քաղա-քիս Հայ ժողովրդեան մէջ 132 ծնունդ և մկր-տութիւն եղեր է, 137 հոգի մեռեր են և 31 ամուսնութեանց պակ տեղի ունեցեր է :

Զմիւռնոյ մէջ հազիւ թէ հազար Հայ տուն կը գտնուի : Իւրաքանչիւր տունը իրարու վերայ 5 հոգի հաշուելով՝ ժողովրդեան թիւը կրնայ համարուիլ

5000 հոգի

պանդուխտ աղբայինք

1000 »

Ընդ ամենայն 6000 »

ՎԱՐԱՋԱՆԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ Ի ՊՈԼԻՍ

Այս ընկերութեան նպատակն է բանալ դըպ-րոցս կիրախօրեայս և անդամօր ձրիապէս ու-սուցանել հասակաւոր աղբայինց և չուկայորդ պատանեաց զգալութիւն աղբային լեզուին, ղհին և զնոր պատմութիւն Հայոց, զիրօն Հայ-աստանեայց և այլ օգտաւէտ ուսմունս և լեզուա-նաե հաստատել գրատունս հասարակաց, ուր ժողովուրդն կարող լիցի ձրիապէս պարապիլ յընթերցումն օգտակար գրոց, և գումարել բանասիրական ակումբս՝ ուր ճառ արկեալ հրա-պարակաւսեալ զաղբասիրական, զուսումնական և զբարոյական հոգեւշահ նիւթոց :

Ընկերութիւնն վարադաւտեան այժմէն ձեռն 'ի դորձ արկեալ է հաստատել 'ի թաղս և յար-ուարձանս Կ. Պօլսոյ, որպէս և 'ի գաւառս՝ օ-ժանդակ ընկերութիւնս (ճիւղ) վառել, արծար-ծել ամենուրեք ուր Հայք իցեն, զխանութակաթ-սէր աղբի և ուսման, և ծաւալել զլոյս նորա 'ի հորիզն Հայաստան աշխարհի :

Այսպիսի աղբասիրական ընկերութիւն մի, որոյ զիանոնադիրն յարակցեմք աստ, անշուշտ օժանդակութեան և քաջակցութեան արժանի է 'ի բոլոր աղբայինց առհասարակ թէ 'ի մեր-ձաւորաց թէ 'ի հեռավորաց :

Կանոնագիր վարադաւտեան ընկերութեան :

Ընկերութեան նպատակն է, նախ կիրակի օ-րերը ձրիապէս դասախօսութիւն անելու և է հա-սակէ աղբայիններու :

Երկրորդ՝ աղբային յառաջդիմութեան վերա-բերեալ նիւթերու վրայ ատենախօսութիւններ անել :

Երրորդ՝ հասարակութեան կարգացունելու համար գիրքեր և լրագիրներ ունենալ :

1. Անդամակցութիւն : Ընկերութեանս ան-դամ եղողը կը պարտի շաբաթական մի բաժինի գին քառասուն փարա վճարել : Ուղղոր միէն աւելի բաժիններ ալ կրնայ գրուիլ :

2. Ընդհանուր ժողով : Ընկերութեան ան-դամ գրուողները ընդհանուր ժողովին աւանդամ կը համարուին և ամեն ընկերական իրաւունք կը վայելեն :

3. Ընդհանուր ժողովին դիւանը կը բաղկանայ մէկ ատենապետ և երկու ատենադպիրներէ որք գաղտնի քուէով ընդ- ժողովին կընտրուին :

4. Ընդհանուր ժողովին ատենաքննիչ հրա-ւիրագիրին մէջ որոշեալ ժամին կը բացուի և ներկայ գտնուած անդամներուն մեծագոյն մա-սին քուէովը կատարուած որոշումները գործա-գրութեան համար վաւերական կը համարուին :

5. Վարչութիւն : Ընդհանուր ժողովը գաղտնի քուէով կընտրէ ատենապետ, ատենադպիր, գրապահ, համարակալ և գանձապահ : Այս 5 անձերը գործադիր ժողովը կը կազմեն որք ըն-կերութեան սովորական գործերը կը տնօրինեն ու կը գործադրեն :

6. Վարչական Գործեր : Գործադիր ժողովը ա-մեն երկու շաբաթ մի անգամ կը հաւաքուի ընկերութեան յառաջդիմութեան և սովորա-կան գործերուն գործադրութեան վրայ խոր-հրդակցելու համար : Ի հարկին արտաքոյ կար-գի նիստեր ալ կրնայ գումարել :

7. Գործադիր ժողովը գործ մը իւր ձեռնհա-սութիւնէն վեր տեսած ատեն՝ դիւանին կիմա-ցնէ ընդհանուր ժողով հրաւիրելու համար : Եթէ դիւանը մերժէ ընդհանուր ժողով հրաւի-րել, գործադիր ժողովը երկու անգամ գրաւոր կերպով խնդիր մատուցանելէ յետոյ իւր ատե-նապետին միջոցով ընդհանուր ժողովի հրաւեր կը կարգայ :

8. Գործադիր ժողովը վեց ամիսը մի անգամ իւր ընդհանուր գործառնութիւններուն տեղե-կագիրը և երևումքն հաշուեկշիռը պիտի ներ-կայացունէ ընդհանուր ժողովին :

9. Գործադիր ժողովին անդամներէն մին եթէ շարունակ երեք նիստերու ներկայ չգտնուի, չորրորդին համար մի գրաւոր աղբարարութիւն կընդունի գործադիր ժողովին և եթէ գարձ-եալ ներկայ չգտնուի առանց հիւանդութեան կամ ճամբորդութեան պատճառի, այն ատեն գործադիր ժողովը դիւանին կիմացնէ որ ընդ-հանուր ժողով հրաւիրէ նորա տեղը մի ուրիշը ընտրելու համար :

10. Գործադիր ժողովը ընկերութեան կնի-քովը կը վաւերացնէ բաժնեգրներուն վճարման անգործագիրները որք ատենապետէն և գան-ձապետէն ստորագրեալ պիտի լինին :

11. Գործադիր ժողովը թէ գրամ և թէ գիրք ինչ նուէր որ ընդունի, նուիրատուներուն ա-նունները լրագրի միջոցով կը հրատարակէ :

12. Գործադիր ժողովը մի հաւաքիչ կորոչէ որ իւրաքանչիւր շաբաթ ընկերներէն բաժնե-գրները հաւաքելով, գանձապահին կը յանձնէ : Հաւաքած գումարներն հարկերին տասը հաւա-քիչին պիտի տրուի :

13. Ընկերական կանոն : Երեք ամիս շարունակ իւր բաժնեգիրը չվճարող ընկերը հրաժարեալ կը համարուի և ալ ընկերութեան մէջ բնաւ մի իրաւունք չունենար :

14. Զիւղեր : Ընկերութիւնը մայրաքաղաքիս թաղերուն, նաեւ գաւառներուն մէջ կրնայ ճիւղեր ունենալ : Մի թաղի մէջ ճիւղ կազմուե-լու համար հարկ է որ առ նուազն երեք ան-դամ գտնուի նոյն թաղին մէջ :

Գաւառներն ալ հարկ եղած հրահանգները կը ղրկէ այս նպատակին համեմատ ճիւղեր կազ-մելու համար և գիրքերով կամ ուրիշ միջոց-ներով կընպատէ նոցա :

15. Եթէ գաւառներէն գաստուներ ուղ-ուին, չափաւոր ամսականով գաստուներ կը ղրկէ, սա պայմանաւ որ վարադաւտեան ըն-կերութեան մի ճիւղ կազմուի հոն :

16. Վերաքննութիւն : Այս կանոնագիրը մին

չե վեց ամիս գործադրելի է . այնուհետեւ եթէ
ընդհանուր ժողովը հարկ տեսնէ , կրնայ փոփո-
խութիւններ անել առանց ընկերութեան նպա-
տակին և ձեւակերպութեանը դաշխելու :

Սոյն կանոնագիրը ճշգրտութեամբ օրինակուած
լինելուն համար կը վաւերացունենք :

1874 Հոկտեմբեր 8 Ղարթիւի :

Ի դիմաց դիւանի ընդհանուր ժողովոյ
վարագրատեան ընկերութեան ,
Ատեմապետ Ատեմապիւր ,
Յ. ԳՈՒՐԳԷՆ Ս. ԹՈՒՄՅԱՆ

ՔԱՆԱՔԱՆ ԷՆԻՔԻՔ

Զմիւռնիա , 22 Փետրվար :

Հինգշաբթի օրն սրբոյ վարդանանց զորավա-
րաց տօնակմբութիւնն լինելով , ըստ ամեն տար-
ուան բարեպաշտ սովորութեան , հանդիսաւոր
պատարագ մատուցաւ 'ի սուրբ Ստեփաննոս եւ
կեղեցին 'ի ներկայութեան բազմաթիւ ժողո-
վոյեան : Ժամերգութիւնն վերջանալէ ետեւ ,
եկեղեցականաց դասն՝ ընկերութեամբ երգե-
ցիկ մանկանց , 'ի Ս. Մեսրոպեան վարժարանն
գնացին փառաւոր հանդիսիւ . ուր պարագայիս
յարմար մաղթանք , հոգեւոր երգեր և ճառա-
խօսութիւնք տեղի ունեցան 'ի ցնծութիւն սրտի
բարեպաշտ ժողովրդեան :

—Ամոյս Տին Կ. Պօլսոյ Հայոց Պատրիարքարա-
նին մէջ որոշեալ վարչական քանի մը անօրէնու-
թիւններէն հետեւեալ յօդուածն յառաջ կը բե-
րեմք , որ քաղաքիս Հայոց կը վերաբերի :

«Իզմիրի կրօնական և քաղաքական ժողովոյ
պաշտօնավարութեան օրինական շրջանը լրացած
ըլլալուն պատճառաւ՝ արդէն տուած հրաժա-
րականին , որ դեռ կախ մնացած էր , այս ան-
գամ ընդունուելով , որոշուեցաւ իզմիրի արժա-
տէր Գէորգ քահանային հրահանգ տալ , որ իւր
նախագահութեան ներքեւ կրօնական և քաղա-
ժողովները սահմանադրապէս վերակազմէ »:

Կըլեմք թէ 'ի Պատրիարքարանէ՝ յուզարի-
եալ հրահանգին համեմատ , դաշ շաբթու 'ի գործ
պիտի դուրս յիշեալ ժողովոյ վերակազմութիւնն :

—Հասարակէն յԱլաշէհիր երթալու երկա-
թուղին երկուշաբթի օրը մեծ հանդիսիւ բաց-
ուեցաւ : Այս բարեպաշտ առթիւ յիշեալ եր-
կաթուղւոյն ընկերութիւնն փառաւոր հայկե-
րոյթ մի տուաւ Ալաշէհիր կայարանն , ուր հրա-
ւիրեալ ներկայ գտնուեցան նահանգիս կուսու-
կալ վսեմաւ Աճմէտ Ռասիմ փաշան , տեղական
իշխանութեան գլխաւոր պաշտօնատարք , հիւ-
պատոններն , Աւստրօհունգարիոյ նաւատորմին
հրամանատար Սթէյնէք ծովապետն , Օթոման
պանքային և Այալունի երկաթուղւոյն տնօրէնքն
և այլն : Կառախումբն՝ որոյ մէջ կը դա-
նուէին բոլոր հրաւիրեալ անձինք , իզմիրէն ա-
ռաւօտեան ժամը 7ին (ըստ եւրոպացւոյ) մեկ-
նելով՝ 11 1/2ին , այնինքն կէսօրէն կէս ժամ յա-
ռաւ հասաւ յԱլաշէհիր ուր 4 ժամ մնալէ ետեւ ,
երեկոյեան ժամը 7 1/2ին բոլոր հրաւիրեալքն
վերադարձած էին 'ի քաղաքս :

—Հեռագիրն կը անուշանէ թէ՝ օգոստոսի առ-
ձրանլինիս Յովսէփ կայսեր հրամանագրով մի,
Զմիւռնոյ Աւստրօհունգարիոյ ընդհանուր հիւպա-
տոս վսեմաշուք մօսիւ տը Շէրցէր ասպետն՝ ա-
ռաւ տրական գործոց տնօրէն կարգեցաւ 'ի դեռ-
պանատան Լոնտոնի :

Մօսիւ տը Շէրցէր ասպետն՝ իւր հեղահամբոյր
բնաւորութեամբն և իւր խոհական 'կենցաղա-
յիտութեամբն ոչ միայն Աւստրօհունգարացի
հպատակաց՝ այլև զվիւճանցի բոլոր երեւելաց
համակրական սէրն ու յարգութիւնն 'ի ձեռս
բերած լինելով , նորա մեկնին 'ի քաղաքէս՝ ան-
շուշտ արտօնութեան պատճառ պիտի լինի :

—Յայտնի է թէ քաղաքիս վերի թաղի ամրո-
ցը գայտէֆէ դալէ կոչուած Բակիւս լեռան վե-
րայ շինուած է , որոյ ներքեւ ստորերկրեայ շատ
ճանապարհներ կը գտնուին : Անցեալ շաբթու
այս լեռան մէկ մասն սաստիկ ու շարունակ անձ-
րեւերէն վնասուելով , իջաւ բաւականապէս և
վիհ մի գոյացաւ , որ շատ մեծ չէ :

—Անձրեւներն երկու շաբթի 'ի վեր շարու-
նակուեցան՝ մի քանի օր ընդհատութեամբ :

—Գողութեան դէպքերն գծադրարար կը-
շարունակուին քաղաքիս մէջ . որոյ մէջ նշանա-
կութեան արժանի է վաճառականի մը գրաստան
բացուելը Կիրիտ խանին մէջ . ուր գողերն մտնե-
լով երկաթե արկղը կոտրեցին , թէև մէջը շատ
բան չեն գտեր : Ոստիկանութիւնն նոյն խանին
բեռնակիրներն և քանի մը կատակաւոր ան-
ձինք 'ի բանտ դրաւ . բայց տակաւին էյայտ-
նուեցան այս շարագործութեան հեղինակներն :

—Կըլեմք թէ 'ի մօտ առուրս Կ. Պօլսոյ մէջ
երեք յոյն օրիորդք օսմանեան երիտասարդաց
հետ սիրահարուելով , մահմետական կրօնն ինք-
նայոժար կամօք ընդունել են՝ նոցա հետ օրի-
նաւորապէս ամուսնանալու համար : Յիշեալ օ-
րիորդաց մին 'ի Պէյքօզ կը բնակի եղեր , երկ-
րորդն 'ի Չէնկէլի գիւղ և Յիւրն 'ի Պէշիքթաշ :

—Կ. Պօլսոյ Յունաց Պատրիարքարանն յամաց
հետէ 14 միլիոն զուրուշ կը պահանջէ Հէլլատայի
եկեղեցական իշխանութենէն : Պահանջը՝ որ
ըստ ժամանակին երկուց կողմանց համաձայնու-
թեամբ կարգադրուած է , երբ յիշեալ երկրին
եկեղեցւոյն անկախ իշխանութիւն չնորհեցաւ
Կ. Պօլսոյ Յունաց Պատրիարքարանէն : Սակայն
մինչև ցայսօր կարելի չէ եղեր այս պահանջն
ստանալ : Ուստի Բարձրագոյն Դուռն ըստ խնդ-
րոյ յիշեալ պատրիարքարանին , յատկապէս
պատուէր տուաւ վեռ . Յովիտաէս Պէյլին , որ
այս գործն յաջողութեամբ լընցնելու համար՝
ամեն ջանք և ամեն պաշտօնական միջոցներն 'ի
գործ դնէ :

—Առաջիկայ Մարտ ամսէն սկսեալ պիտի առ-
նուր օրագրաց ամեն մէկ թերթի համար որոշ-
եալ 2 փարա գրուի (տամբա) տուրքը :

«Ճէրիէի Հաֆա» տաճիկ լրագրոյն մէջ հրա-
տարակեալ նամակ մը , 'ի մէջ այլոյ , լրագրաց
տալիք այս տուրքին վրայ ալ դիտողութիւններ
ընելէ յետոյ՝ կը յաւելու թէ , կայսերական Գան-
ձուն համար շահաւոր և հասարակաց համար
օգտակար կըլլայ եթէ ծանր տուրք մը խաղի
թղթերէն առնուլ որոշուի : Եւ 'ի վերջոյ կը յիշէ
Գաղղիոյ մէջ ծծմբաւի մենավաճառ ըլլալն , և
ծծմբաւի դարձեալ միևնոյն դնով վաճառելու
պայմանաւ՝ տարին տասը միլիոն փրանք տալու
յանձնառու դառնալին »:

ՓՈԽՆՁ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

Բամպակը կուղուի և գիններն քիչ մը բարձ-
րացան : Այս շաբթու 1500 հակի չափ վաճառե-
ցաւ 395—400 զուրուշի մեքենայով ժաքրուա-
ծը , 375—380՝ կենդինարը՝ չըբըբը և 338—
340՝ Ատանայի բամպակը :

Աֆիօնը նմանապէս կուղուի , և հասարակ ըն-
տիր տեսակը 210—212 զուրուշի դնող կայ ,
վաճառող չկայ այժմ : Ամերիկայէն և Հոլանտա-
կան ընկերութեան կողմանէ եկած գնման պատ-
ուերքն են որ բարձրացուցին գիններն : Անցեալ
և այս շաբթու 200 կողովի չափ աֆիօն վաճա-
ռեցաւ : Նոր հնձոյն երեւումնքն յաջող են :

Քէօքայոյան 'ի հանգարտութեան կը դառնուի
Փաղամուտը միշտ կուղուի :

ԾԱՆՈԹՅՈՒՄ

Մօսիւ վալէի դեղագործն , որոյ խանութը Գա-
սալայի փողոցն է , խնայ կուտայ նասարակութեան
քի նոր ու պատուական պատուաստ(աշ) բերել տուած
է եւ քափաւոր գնով կը պատուաստէ երկխաները . իսկ
չքաւոր ծնողաց գաւակներն՝ օրիաբար կը պատուաստէ
առանց խտրութեան ազգայնութեան եւ կրօնի :

ԳՈՐԾՏՈՒՆ ԿԱՀԱՐԱՍԵԱՑ

Ներքոյգրեալ պատիւ համարիմ անձինս ծա-
նուցանել արդոյ հատարակութեան թէ կատա-
րելագործելով զգործատուն իմ , նորա մէջ կը
չինեմ՝ ամեն տեսակ գեղեցիկ և ամենահաստատ
կահարաւոր եւրոպական ձեւով , աժան դնովը :
Գործատուն կը դառնուի Շիշեֆիներուն շուկան
Բէդրային ֆրէնքլանտէին մէջ , թիւ 5 :

ՏԻՄԻԴԻՐՈՍ ԳՈՒԼԱՄԳԻՏԻՍ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳՐԱԽԱՏԱՐԱՐ

ՄԱՐԻ ՏԱՅԻՆԱՆ

Գրեաց Յ. Կ. Սըվաճեան :

40 երես քաղկացեալ բանաստեղծութիւն մ'է , փայ-
լուն քրքի վերայ մարտը տպագրուած 'ի տպարան
Տեաեան : Հեղինակը իւր գողարիկ եւ սրտաշու-
գրիչ ուրուագրած է ճարտարութեամբ , վաղա-
դիկ օրիորդին յեղեմական սրանգելի դրախտն ընծալ-
ուիլը : Կըծախոսի հատն 3 դրուշի 'ի տպարանի Տե-
աեան եւ յԼեքերցատունն Հայոց՝ Յ. Բաբեկեանի բով :

ՀԻՒՆԴԻՆ ԲԱՐԵԿԱՍԵ



ԳԵՂԱՀԱՏՔ ՀՈՒԼՈՒԻԷ

Ջ.ՂԱՅԻՆ ՀԻՒՆԴԻՆ ԲԱՐԵԿԱՍԵ

Մարդոց զաւթն գրութեան (Գրեթէ) շատ յոյսած ըլլալ
սովորի ախտ մըն է և քիչեւեւ ամենափոքրիկ շարժումը կամ զգո-
գութեանը վտառի է յոյժ . վասն զի ուր գտնուէ անոր դե-
ղը : — Միակ դեղը այս է . քիչ խմէ գինի , գարեջուր , և ող-
ւոյ ըմպելիք . և աւելի աղէկ կըլլայ որ բուրդովին հեռանաւ ա-
նոցմէ , և ամենին չխմու . նմանապէս խաչմէ մի խմէր , և անու-
աղ թեթեւ թէյով (չա) գոհ եղիր : Կարելի եղածին չափ մա-
քուր օդ ծծէ ամեն գիշեր իմ գեղաճատեան ետեք կամ շոր հատ
կըլլէ , շատ միս կեր և համեմուքէ (սալա) հեռի կեցիր : Եթէ
այս օգտակար կանոնները ճշգրտութեամբ 'ի գործ դնելու ըլլաւ ,
միտք չուտով պիտի հանգստանայ , մարմնը առողջ պիտի ըլլայ և
պիտի մոռնաւ թէ ջրաց շաբթուան ունեցար :

ԱՆԿԱՎՈՐՈՒԹԻՒՆԻ ԲԵՐԿԱՍԵՆՑ

Այս գործարանաց վերաբերեալ ամեն հիւանդութիւնց մը
թէ կը կըլլան չափէն աւելի ջրով կըլլան կամ բաւական չեն ըլ-
լար , թէ բարձր կամ աւագ երկիւմանց կը հասնին կամ թէ ա-
նոց մեջցաւ կը գոյանան մեքենայի համապատասխանած մասը : Այս
ամեն հիւանդութեանց ժամանակը պէտք է Հուլիսուէի գեղաճատ
մը աւանդու տպակ հրահանգաց համեմատ և անոր սպեղանիովը ջ-
րիկ երկվամանց վարի կողմը անկողին մտնելու ժամանակը : Այս
գործունը անմիջական օգնութիւն մի պիտի մատուցանէ , այնինչ ու-
րիշ դեղերը գուր տեղը գործածուած պիտի ըլլան :

ՍՏԱՄՈՒՄԻ ԱՌԻՈՒԼԸ

Որ և է գեղ մի շիւրար ստամոքսի գործութիւնը նորոգել և
աղէկանել զայն չուտով՝ ինչպէս այս գեղաճատերը . որոնք անպա-
խառնութենէ կամ վատթար կերակուել պատճառաւ բուրդ թեթե-
ւութիւնը կըլլան և կը հասնին 'ի լեւորն (գործ Գրեթէ) : Ե-
րուն գործողութիւնը կը կարգադրեն . քիչեւեւ սաստիկ չափով
(Գրեթէ) դեպքերու մէջ քանիչ յեղեղործութիւն մի ունի և լեղի
ու ստամոքսի ամեն անկարգութիւնները միշտ կը բժշկէ :

ԲՈՐԲՈՒՄԻ ԹՈՒՄՅԱՆԻ (ԴՐՈՒՄԻ) ՀԱՁ ԵՒ

ՀԱՐԲՈՒՂԻՍ

Հնչառութեան վերաբերեալ գործարանաց հիւանդութիւն
ամեն ախտէն աւելի յաճախ կը պատահի և երբեմն աւելի վատ
գաւոր է : Անոց գործողութեանց անկարգ ընթացքին առաջինը
չափերը կրնան միշտ կարգադրուիլ Հայրուէի հաշակաւոր դեղ-
հատից միջոցաւ : Ասոր շուտով կը դարմանեն արեան ուր և է ա-
ռաւ տրական անշարժութիւնը , կը թեթեւանայ խոցանք շիւրարի-
քը , կը բարեխառնեն շիւրարութեան սաստիկ արագութեան և կա-
րգութեան կուտան շիւրարիքն ու թեթեւանայ դիւրութեամբ ու կա-
նաւորապէս գործելու : Այս գեղաճատերը՝ իրենց մարդկային
գործութեամբ կը սրբեն արեւը ամեն աղտոյնութիւններէ , և այս
եղանակաւ կը գործադրեն զգրութիւնը (Գրեթէ) ընդդէմ ծիւրակո-
ւիտի , շիւրարեղութեան , և ուրիշ թեթեւանայ անկարգութեանց :

ՏԿԱՐԱՑԵԱԼ ՄԱՐԿԱՅԻՆ ԲԱՐԵԿԱՍԵՆՑ

Տկարութեան , թուրութեան և ջրացաւութեան դեպքերու
մէջ , որոնք ուր և է ընկան կամ գերբնական չափազանցութեան յա-
ռաջ եկած են , այս գեղաճատից պէտք է և նորոգել ներքոյգր-
ութիւնը մեծապէս օգտակար է . քանզի մարդու թիւնը կը վեճա-
ստանէ , մարմնայն ամեն հիւանդութեանը կը կանանաւորէ , ջրով
գործելու կըլլաւորցնէ , հիւանդին միտքը կը յարգարէ և վեր-
պէս առողջութիւնը ձեռք կը բերէ :

Հուլիսուէի գեղաճատերը ամենին օգտակար դեղերն են հի-
տեալ հիւանդութեանց համար :

Հնչաղեղութիւն	Յօդացաւութիւն	Թորացաւութիւն
Միաձայնի ախտ	Տեաւատութիւն	Ցաւը որովայնի
Խիթ (սալա)	Ջրագրութիւն	Միգրադեղութիւն
Հարուղի	Ամաւորութիւն	Խորքորցն
Ծիւրական ախտ	Գաւուկն	Ախտը ընդեաց
Թանջ (պէտալիք)	Բարախիւն սրտի	Անկանոնութիւնը
Խոյլ պարանոցի	Քար կամ խիճ միգրա-	Նանց
Վերնոտութիւն	Նոցի	Մորթային հիւանդ
Լեղի հիւանդութիւնը	Վախճաւութիւն	Թեթեւ
Փողայտ	Ափորդիտեան ախտ	Խոցողութիւնը

Գիտել արժան է որ սպեալ հրահանգներ կան ամեն լեզու
որոյմէ մէկ հատ կը գտնուի իւրաքանչիւր տառիկն մը 'ի տեղ-
կու թիւն հիւանդաց , ամեն պարագայից մէջ :

Այս գեղաճատերը , որ կըլինուի Հոգեւոր բժշկին անհա-
կան վերաւորութեամբ , կը վաճառուի իւր գործարանը 'ի Լե-
տան , Օքսֆորդ կոչուած փողոցը թիւ 533 , 'ի դէն 1 և 1 միջ-
շուրի , 2 1/4 և 1 1/2 շրջին տալիս , ըստ մեծութեան արժեք :

Խմրակիր—տէր լրագրոյն ,

Գ. Դ. Գ. Պալաւալեան :

Ի ՏԳՍՐԱՆԻ ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ